ՔՐԴԵՐԸ ԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ X ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ (ԸՍՏ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ)

Ա. Պ. ՓՈՂԱԴՅԱՆ

Միջնադարյան արաբալեզու հեղինակները Ատրպատականում քրդերին հիշատակում են VII դարի 40-ական թթ. արաբների կողմից նահանգի գրավման ժամանակ[1]։ *Արաբական նվաճումներից հետո Մոսուլի մարզից և այլ շրջաններից դեպի Ատրպատական քրդական ցեղերի արտագաղթերը տեղի էին ունենում անաղմուկ, ռազմաքաղաքական այս կամ այն իրադարձությունների և սոցիալ-տնտեսական տարբեր դրդապատճառների հետևանքով։ Այդ գործում առանձնահատուկ էր խաշնարած քրդերի դերը, որոնք տարվա տարբեր եղանակներին՝ ձմեռվա և ամառվա ցիկլերը անց էին կացնում նահանգի արոտավայրերում, հատկապես նրա հարավ-արևմտյան հատվածներում։*

Աբբասյան խալիֆայության աստիճանական քայքայումը և տեղական ուժեղ իշխանության բացակայությունը X դարի առաջին կեսին նպաստավոր պայմաններ ստեղծեցին Ատրպատականում քրդական տարրի ակտիվ գործողությունների համար։ Այս շրջանում քուրդ ֆեոդալների մեջ աչքի ընկավ Սաջյան ամիրայական դինաստիայի օրոք անուն հանած Դայսամ իբն Իբրահիմ ալ-Քուրդին։ Ատրպատականում նրա և քրդերի գործունեության վերաբերյալ հիմնական տեղեկությունները պահպանվել են միայն արաբական աղբյուրներում՝ մասնավորապես X—XI դդ. պատմիչ Իբն Միսքավայհի, Իբն ալ-Ասիրի (XIII դար), Իբն Խալդունի (XIV դար) և այլոց երկերում։ Նշած տվյալները ցույց են տալիս, որ Դայսամի հայրը եղել է մահմեդական խարիջի հոսանքի հետևորդ և IX դարի երկրորդ կեսից այդ շարժման հայտնի պարագլուխ Հարուն աշ-Շաորիի կողմնակիցներից մեկը։

Երբ 896/7 թ. Հարունը սպանվեց և Մոսուլի մարզում ճնշվեց խարիջիների շարժումը, նրա հայրը փախավ Ատրպատական և ամուսնացավ, ինչպես ընդգծում են արաբ հեղինակները, տեղի քուրդ ռայիսներից (առաջնորդներից, ցեղապետներից) մեկի աղջկա հետ, որն էլ ծնեց Դայսամին[2]։ *Դա նշանակում է, որ Դայսամը ծնվել է Ատրպատականում 897 թ. հետո։ Ատրպատականը, որի ազգաբնակչությունը բաղկացած էր իրանական խառը տարրերից, խալիֆայության գերիշխանության ժամանակաշրջանում հաճախ միացվում էր Արմինիա ոստիկանության հետ։ Այս երևույթը մի վարչական վերապրուկ էր, որի սկիզբը հասնում էր մինչև սասանյան շրջան*[3]։ *Այստեղ Սաջյանների գործունեությունը (որպես կառավարիչներ) սկսվեց 898 թ., երբ Ատրպատականի և Արմինիայի կառավարիչ նշանակվեց Աֆշին մականունով Մուհամմադ իբն Աբու աս-Սաջը*[4]։ *Դայսամ իբն Իբրահիմ ալ-Քուրդին, ինչպես նշում են արաբ*

---

[1] البلاذری، کتاب فتوح البلدان، القاهرة، ۱۹۰۱، ص ۳۳٤

[2] Ibn Miskawaihi. The Experiences of the nations, ed. by H. F. Amidroz. V. II, Oxford, 1921, p. 32—33; ابن الاثیر، الکامل فی التاریخ، جلد ٦، القاهرة، ۱۳۵۳، ص۲۸٦؛ ابن خلدون، کتاب العبر و دیوان المبتدأ و الخبر، ج ۳ مصر ۱۲۸٤، ص ٤۱۳۰۰۰

[3] Ա. Տեր-Ղևոնդյան. Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում. Երևան, 1965, էջ 112։

[4] الطبری تاریخ الرسل و الملوك، ج ۱۰، القاهرة ۱۹٦۹، ص ٦۸؛ ابن الاثیر، الکامل۰۰۰ ج ٦ ص ۹۱۰

հեղինակները, ծառայեց Յուսուֆ Աբու աս-Սաջի (901—928 թթ.) մոտ, ակնհայտ հաջողությունների հասավ և համարվեց նրա հայտնի զորավարներից մեկը։ Նա այնքան հզորացավ, որ Յուսուֆի մահից հետո տիրեց Ատրպատականին[5]։ Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Ատրպատականում քաղաքական անկախության համար Դայսամի պայքարը սկսվեց մոտավորապես 928 թ., երբ սպանվեց Յուսուֆը[6], թեպետ դրանից հետո Սաջյանները մի քանի տարի մնացին այնտեղ։

Իբն Միսքավայհը և Իբն ալ-Ասիրը Դայսամ իբն Իբրահիմ ալ-Քուրդիի մասին առաջին տեղեկությունները հաղորդում են հիջրի 326 (937/8) թ. իրանական Ջիբալ նահանգի Զիյարիների նախկին կառավարիչ Լաշքարի իբն Մարդիի Ատրպատականի վրա հարձակվելու կապակցությամբ[7]։ Նրանց կարծիքով նահանգը այդ թվականին արդեն գտնվում էր Դայսամի իշխանության ներքո։ Պահպանված դրամներից պարզվում է, որ դեռ 934/5 (323) թ. Ատրպատականի իշխանն էր Մուֆլիհը՝ Յուսուֆ իբն աս-Սաջի ծառան[8]։ Պետք է ենթադրել, որ նահանգի իշխանությունը Դայսամին անցավ մոտավորապես 934—938 (323—326) թթ. միջև[9], որովհետև հայտնաբերված դրամական գանձերը վկայում են, որ հիջրի 325 (936/7) թ. նրա անունով դրամ է թողարկվել Բարդայում (Պարտավում)[10]։ Սա նշանակում է, որ Սաջյան Մուֆլիհի իշխանության խառը շրջանում Դայսամը արդեն որոշ հաջողությունների էր հասել։

Արաբական սկզբնաղբյուրները վկայում են, որ Դայսամ ալ-Քուրդիի զորքի մեծամասնությունը քրդեր էին և միայն փոքր զորաջոկատներ կազմված էին իրանական գայլամներից (դելմիկներից)[11]։ Պետք է ենթադրել, որ սկզբից էլ Դայսամը հենվում էր քուրդ ցեղակիցների վրա, որոնց թիվը այդ շրջանում, ինչպես երևում է, բավական մեծ էր նահանգում։

937/8 (հիջրի 326) թ. Ջիբալից մեծաթիվ զորքով Ատրպատականի վրա հարձակվեց Լաշքարի իբն Մարդին, որից Դայսամը իրար ետևից կրեց մի քանի պարտություն։ Լաշքարին հետզհետե գրավեց գրեթե ողջ նահանգը, բացի Արդեբիլից, որը համարվում էր նրա կենտրոնը (մայրաքաղաքը)։ Նրան հակահարված տալու համար Դայսամը սկսեց բանակցել Զիյարիների ամիրայական տան իշխան Վաշմգիրի հետ։ Ռազմական օգնություն ստանալու դիմաց, որը բաղկացած էր «տասը հազար հեծյալ քրդերից և ուրիշներից», նա պարտավորվեց կատարել հետևյալը. 1) ապահովել այդ զորքի բոլոր տեսակի ծախսերը Ատրպատական մուտք գործելուց անմիջապես հետո՝ Ռեյի կողմից նահանգի խունջ քաղաքից, 2) Դայսամը խոստացավ Վաշմգիրի աստվին ուրբաթօրյա խութբա կատարել Ատրպատականի բոլոր մինարեթներում, 3) նա

---

[5] Ibn Miskawaihi. V. II, p. 33. ابن الاثير الكامل ج ٦، ص ٢٨٦ : ابن خلدون، كتاب العبر، ج ٣، ص ٤١٣ .

[6] В. Ф. Минорский. История Ширвана и Дербенда. М., 1963, с. 86 ابن الاثير، الكامل، ج ٦، ص ١٨٨ .

[7] Ibn Miskawaihi. The Experiences of the nations, ed. by H. F. Amidroz V. I, Oxford, 1920, p. 398—404. ابن الاثير، الكامل، ج ٦، ص ٢٦٧-٢٦٨ .

[8] Ibn Haukal. Viae et Regna Descriptio ditioni moslemica.—Bibliotheca Geographorum Arabicorum, ed. M. J. De Goeje, pars II, lugduni Bat. Apud E. J. Brill, 1873, p. 236.

[9] А. А. Быков. Дайсам ибн Ибрахим ал-Курди и его монеты.—Эпиграфика Востока, 1955, X, с. 27—28:

[10] А. А. Быков. Два новых дирхема Дансама ибн Ибрахима ал-Курди.—Эпиграфика Востока, 1971, XX, с. 74—76:

[11] Ibn Miskawaihi. V. II, p. 31; ابن الاثير، الكامل، ج ٦، ص ٢٨٦.

պարտավորվեց Վաշմգիրին տարեկան վճարել հարյուր հազար դինար և նրա զորքը անհապաղ վերադարձնել Լաշքարիի հետ հաշիվները մաքրելուց հետո[12]։

Երբ նույն թվականին Վաշմգիրի բանակը Ռեյից ուղևորվեց Ատրպատական, Լաշքարին առանց ռազմական ընդհարումների իր զորքը դուրս բերեց նահանգից, անցավ Անձևացյաց գավառը, որտեղից էլ մտադրություն ուներ շարժվելու դեպի Մոսուլ։ Սակայն ճանապարհին Հայ Արծրունիները Լաշքարիի դեմ ծուղակ լարեցին և սպանեցին նրան[13]։

Ռազմաքաղաքական վերոհիշյալ իրադարձությունների նկարագրությունը բավական մանրամասնորեն տալիս են Իբն Միսքավայհն ու Իբն ալ-Ասիրը։ Նրանց հաղորդումները լրացնում են միմյանց և ավելի ամբողջական են դարձնում Դայլամի գործունեությունը Ատրպատականում, ինչպես նաև նրա և հարևան իշխանների փոխհարաբերությունները։

Կրկին տիրելով Ատրպատականին, Դայլամը այնտեղից վտարեց նաև արաբ համդանիներին[14]։ Սակայն այս անգամ նա ստիպված եղավ՝ պայքար մղել իր քուրդ ցեղակիցների դեմ, որոնք նահանգի ծայրամասերում բավական աղատ էին գործում, և գրավել էին նրա որոշ տիրույթները։ Նրանց հակահարված տալու համար իր վարձկան զորքում նա ծառայության վերցրեց այլևայլ վայրերից, այդ թվում նաև Մոսուլից եկած օտար ուժերին։ Նա համոզվեց, որ դայլամների միջոցով կարող է ծնկի բերել ըմբոստ քուրդ ֆեոդալներին։ Դայլամի մոտ ծառայության անցան նաև գայլամցի ազնվականներ, որոնց թվում էր նրա ապագա հակառակորդի՝ Մարզբան իբն Սալարի կրտսեր եղբայր Ալ՝ալուք իբն Մուհամմադ իբն Մուսաֆիրը։ Դայլամական զորախմբով Դայլամին հաջողվեց վերջ տալ իր ցեղակիցների՝ քրդերի երկապակությունների, նրանցից խլել գրաված տիրույթները և ձերբակալել մի խումբ ցեղապետերի[15]։

Հիջրի 326—330 (937/38—941/42) թթ. աղբյուրները բոլորովին լռում են Դայլամի մասին։ Այս հանգամանքը պետք է բացատրել նրանով, որ նրա գործունեությունում այս տարիներին, ըստ Լոնուլթին, էական իրադարձություններ տեղի չունեցան։

Դայլամի և Սալարյանների հակամարտությունների մասին առաջ մատենագիրները սկսում են խոսել հիջրի 330 (941/2) թ.։ Այդ թվականին էլ խիստ սրվեցին Սալարյանների և Դայլամի փոխհարաբերությունները, որում մեծ էր վերջինիս վեզիր Աբու ալ-Կասիմ Ալի իբն Ջա՝ֆարի դերը։ Բանն այն էր, որ Աբու ալ-Կասիմը սկսեց դավեր նյութել Դայլամի դեմ, որի պատճառով էլ հեռացվեց վեզիրի պաշտոնից, բայց հասցրեց փախչել ու ապաստան գտնել Թարմ (Թարում) նահանգում (Դայլամում) Սալարյան դինաստիայի (916—մոտ 1090 թթ.՝ Դայլամում և Ատրպատականում) հիմնադիր Մուհամմադ իբն Մուսաֆիրի մոտ։ Նրա այստեղ հասնելը, ինչպես ընդգծում են Իբն Միսքավայհն ու Իբն ալ-Ասիրը, համընկավ Մուհամմադ իբն Մուսաֆիրի դեմ նրա երկու տղաների՝ Մարզբանի և Վահսուդանի ապստամբությանը։ Վերջիններս ձերբակալել էին իրենց հորը և գրավել նրա ամրոցներն ու տիրույթները[16]։ Աբու ալ-Կասիմ Ալի իբն Ջա՝ֆարը ծառայության անցավ Մարզբանի մոտ իբրև վեզիր և սկսեց նրան հրահրել Դայլամի դեմ։ Մարզբանի ու Աբու ալ-Կասիմի մտերմությունը ամրապնդվեց նաև, ինչպես ընդգծում են Իբն Միսքավայհն ու Իբն ալ-Ասիրը, շիական «Բաթինիյա» աղանդի հետևորդ լինելու հանգամանքով[17]։ Դայլամի դեմ դավեր նյութելու նպատակով Աբու ալ-Կասիմը ծածուկ

---

[12] Ibn Miskawaihi. V. I. p. 4 0 –401

[13] ابن الاثير، الكامل، ج ٦، ص ٢٦٧-٢٦٨ .

[14] Նույն տեղում։

[15] Ibn Miskawaihi. V. I. p. 31; ابن الاثير، الكامل، ج ٦، ص ٢٨٦ .

[16] Նույն տեղում։

[17] Նույն տեղում, էջ 32։

կապեր հաստատեց նրանից և նրա խարիջիական հավատամքից դժգոհ տարրերի հետ։ Հիջրի 330 (941/2) թ. Մարզբանը ներխուժեց Ատրպատական և իսկույն նրա կողմն անցան շուրջ երկու հազար դայլամցի մարտիկներ, ինչպես նաև շատ քրդեր[18]։ Պարտություն կրելով՝ Դայսամը հարկադրված եղավ փոքր զորախմբով փախչել Հայաստան։ Օգտվելով, ինչպես նշում է Իբն Միսքավայհը, Գագիկ ադ-Դայրանիի (Վասպուրականի հայ իշխան Գագիկ Արծրունի-Գագիկ Դերենիկ—904—943/4 թթ.) հետ ունեցած բարեկամական կապերից, նա հաստատվեց նրա մոտ և պատիվների արժանացավ[19]։ Դայսամը զղջաց իր կատարած սխալի՝ բանակում մեծ թվով դայլամների ներգրավելու համար և սկսեց հավաքագրել քրդական զորախմբեր։ Իբն Միսքավայհը, ընդգծելով վերոհիշյալը, նշում է, որ ժամանակի լրջախոհ մարդիկ նրան խորհուրդ տվեցին գործ չունենալ դայլամների հետ, իսկ անհրաժեշտության դեպքում նրանցից պահել ընդամենը 5 հարյուր մարդ[20]։ Այդ ժամանակ Աբու ալ-Կասիմ Ալի իբն Ջա՛ֆարի դեմ Աբու Սաիդ իբն Մուսա Իսքավայհի գլխավորությամբ դավադրություն կազմակերպեցին այս անգամ Մարզբանի մարդիկ։ Ալի իբն Ջա՛ֆարը, դպալով այդ և հաշվի առնելով Մարզբանի ագահությունը, խորամանկ քայլ արեց. նա խոստացավ նրա համար մեծ հարստություն ձեռք բերել Թավրիզից։ Մի խումբ մեծամեծ մարդկանց հետ Ալի իբն Ջա՛ֆարին հաջողվեց մեկնել Թավրիզ։ Այստեղ նա հայտնեց Դայսամին, որ ինքը պատրաստ է նրան օգնելու, մինչև որ վերականգնվի նրա իշխանությունը Ատրպատականում։ Դայսամն ընդունեց այդ առաջարկը միայն մի պայմանով, որ Ալի իբն Ջա՛ֆարը ամենից առաջ ոչնչացնի դայլամներին։ Կերջինս Թավրիզի բնակիչների օգնությամբ ձերբազատվեց դայլամների զորահրամանատարներին և իր հավաքած զորքով անցավ Դայսամի կողմը։ Նրան միացան Մարզբանի վատ վերաբերմունքից դժգոհ քրդերը նույնպես[21]։ Սույն դեպքերը արագացրին Մարզբանի գործողությունները և նա շտապեց Թավրիզ։ Քաղաքի արվարձաններում տեղի ունեցան թեժ մարտեր, ուր քրդերը դարձյալ պարտվեցին. և Դայսամը պաշարվեց Թավրիզում։ Ապա գիշերով նա ծակեց քաղաքի պարիսպը և իր զինվորականների հետ մեկնեց Արդեբիլ։ Թավրիզը թողնելով պաշարման մեջ, Մարզբանը ևս զորքով մեկնեց Արդեբիլ։ Այստեղ էլ Դայսամը ձերբակալվեց և բանտարկվեց Թարոմի նահանգում[22]։

Այս դեպքերի մասին խոսելիս, Անանուն հեղինակը հաղորդում է, որ Մարզբանը Ատրպատականի վրա հարձակվեց ոչ թե հիջրի 330 թ., այլ հիջրի 328 (939/40) թ.։ Ըստ նրա Արդեբիլում Մարզբանը Դայսամին պաշարեց երեք տարի շարունակ, որի ընթացքում քաղաքի արվարձանում կառուցեց մի ավան և կոչեց «աս-Սաբիրա» (համբերող)[23]։ Այս վկայությունից երևում է, որ Մարզբանը Արդեբիլը գրավեց հիջրի 331 (942/3) թ.։ Իսկ պաշարման ժամկետը (երեք տարի) համոզիչ չէ։ Աշխարհագիր Իբն Հաուկալը (X դար) իր հերթին ևս գրում է, որ Սալարյան Մարզբանը Արդեբիլը նվաճեց հիջրի 331 թ. և քանդեց քաղաքի հսկա պարիսպը[24]։

Դայսամ Իբն Իբրահիմ ալ-Քուրդին շուրջ 7 տարի անցկացրեց Թարոմի ամրոցում և բացակայեց քաղաքական ասպարեզից։ Ատրպատականում իր իշ-

18 Նույն տեղում, էջ 33։

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում, էջ 33—34։

22 Նույն տեղում, էջ 36—37։ Տե՛ս : ابن الاثير، الكامل، ج ٦، ص ٢٨٦-٢٨٧
ابن خلدون، كتاب العبر، ج ٣، ص ٤١٣-٤١٤

23 مؤلف مجهول، كتاب العيون و الحدائق فى اخبار الحقائق، ج ٤، القسم الاول، دمشق، ١٩٧٢ ص ٣٣٨.

24 Ibn Haukal. Op. cit., p. 237.

իշանությունը վերականգնելու փորձերը նա կատարեց ավելի ուշ՝ իրանական բուիների օրոք։ Հայտնի է, որ հիջրի 337 (948/9) թ. Մարզբանը հարձակվեց Մեելի վրա, որտեղ պարտություն կրեց բուի իշխան Ռուքն ադ-Դաուլայից և ձերբակալվեց ու բանտարկվեց Ֆարսի հյուսիս-արևելյան մասում գտնվող Սումայրամ ամրոցում[25]։ Դրանից հետո Ռուքն ադ-Դաուլայի զորքը հարձակվեց Ատրպատականի վրա։ Հաշվի առնելով նահանգում և քրդերի մեջ Դայսամի հեղինակությունը, Մարզբանի եղբայրը՝ Վահսուդանը, նրան ազատեց Մարոմի ամրոցից և հանձնարարեց Ատրպատականի քրդերից զորք կազմել ու հանդես գալ բուի զորահրամանատար Աբդ առ-Ռազակի դեմ[26]։ Իբն Միսքավայհը նշում է, որ Դայսամի քրդական նոր զորքում ընդգրկվեցին նաև դայլամական ջոկատներ։ Նա իսկույն շարժվեց դեպի Արդեբիլ, բայց երբ իմացավ, որ այնտեղ է գտնվում բուի զորավար Աբդ առ-Ռազակը, թեքեց իր ուղղությունը և գնաց Պարտավի շրջան՝ իր զորքը համալրելու և ռազմամթերք հայթայթելու համար[27]։ Սակայն նույն թվականին Արդեբիլի մոտ բուիների հետ ունեցած ճակատամարտում նրա զորքը պարտություն կրեց[28]։ Ապա որոշ ժամանակ անց բուի զորահրամանատարը, մեզ անհայտ պատճառով, իր զորքը դուրս բերեց Ատրպատականից և մեկնեց Ջիբալ[29]։ 949/50 թ. Դայսամը առանց մարտական գործողությունների մտավ Արդեբիլ, որով էլ վերականգնվեց նրա իշխանությունը նահանգում։ Նույն թվականից էլ նա իր մակագրությամբ սկսեց դրամ թողարկել Արդեբիլում[30]։ Այնուհետև քրդական և դայլամական վարձկան զորքի օգնությամբ նա իրեն ենթարկեց գրեթե ողջ Ատրպատականը և հարևան առանձին շրջաններ[31]։

953/4 (հիջրի 342) թ. Սումայրամ ամրոցից փախավ Սալարյան Մարզբանը, որը շուտով հայտնվեց Ատրպատականում։ Դա էլ ճակատագրական եղավ Դայսամի համար։ Խայտառակ պարտություն կրելով Մարզբանի կողմնակիցներից, նա քրդական փոքրաթիվ զորախմբով փախավ կրկին Հայաստան՝ Վասպուրականի հայ Արծրունիների մոտ, այնտեղից էլ՝ Բաղդադ[32]։ Մեզ հասած սկզբնաղբյուրների տվյալները վկայում են, որ Դայսամը մի քանի տարի մնաց Բաղդադում, անցավ Սիրիա և այդ ընթացքում բավական ճիգեր գործադրեց Ատրպատական վերադառնալու համար։ Սալարյան Մարզբանին ջախջախելու նպատակով նա ռազմական օգնություն խնդրեց Բաղդադի բուի հզոր իշխան Մուիզզ ադ-Դաուլայից, արաբ համդանյան իշխաններ Նասիր ադ-Դաուլայից, Սայֆ ադ-Դաուլայից և ուրիշներից[33]։ Սակայն ապարդյուն։ 955/6 թ. Ատրպատականի քուրդ առաջնորդներից մեկի աջակցությամբ նա մտավ Սալմաստ քաղաքը։ Այստեղ էլ Դայսամը անկարող գտնվեց դիմադրելու Սալարյան Մարզբանին և կրկին փախավ ու ապաստան գտավ հայ Արծրունիների մոտ[34]։ Իբն ալ-Ասիրը գրում է, որ Մարզբանին հաջողվեց Հայաստանում ձերբակալել Դայսամին, ապա տեղափոխեց նրան Ատրպատական, «փորեց աչքերը, կուրացրեց և բանտարկեց։ Մարզբանի մահից հետո նրա մարդկանցից մեկը

25 ابن الاثير، الكامل، ج ٦، ص ٣٣٠.

26 Նույն տեղում։ Տե՛ս Ibn Miskawaihi, V. II, p. 135.

27 Ibn Miskawaihi, V. II, 136. Տե՛ս նաև ابن الاثير، الكامل ج ٦، ص ٣٣٠.

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում, էջ 148։

30 А. А. Быков. Два новых дирхема Дайсама ибн Ибрахима ал-Курди, с. 74—76.

31 Ibn Miskawaihi V. II, p. 148—149.

32 Նույն տեղում, էջ 148—151, 156, 161, ابن الاثير، الكامل، ج ٦، ص ٣٤٢-٣٤٣.

33 Նույն տեղում։

34 ابن الاثير، الكامل ج ٦، ص ٣٤١.

սպանեց Դայսամին՝ վախենալով նրա ոխակալությունից»[35]։ Դա նշանակում է, որ Դայսամը սպանվեց 957/8 թ. հետո։

Այսպիսով, X դարի 30—50-ական թթ. ընդմիջումներով Դայսամը կարողացավ դանդես գալ Ատրպատականի ռազմաքաղաքական թատերաբեմում։ Թեպետև զանազան դրդապատճառներով քրդական ցեղերը երբեմն լքում էին նրան, բայց անժխտելի փաստ է նաև, որ ի դեմս նրանց՝ նահանգում լայն գործունեություն ծավալելու համար նա ամուր հենարան ուներ։ Ատրպատականում քրդական միջավայրի առկայությունն էլ հենց նրան հնարավորություն տվեց մի քանի տարի անընդմեջ պայքարը շարունակել ինքնավարության համար։ Բայց անկազմակերպվածության և ներքին երկպառակությունների ու արտաքին հարվածների հետևանքով նրա իշխանությունը երկար չտևեց և Ատրպատականը ենթարկվեց Սալարյաններին[36]։

Միևնույն ժամանակաշրջանում, X դարի առաջին կեսին, քրդերը իբրև ռազմիկ տարր կարևոր դեր խաղացին նահանգի ռազմաքաղաքական կյանքում։ Որպես վարձկան զորք նրանք ծառայության անցան ամիրայական տների՝ Սաջյանների, Սալարյանների և, իհարկե, նույն Դայսամի բանակում։ Ուշագրավ է նշել, որ թե՛ քրդական և թե՛ դայլամական[37] վարձկան զորաջոկատները այս շրջանում սկսած իրենց ռազմական գործողություններով նոր լիցք հաղորդեցին արևելյան մահմեդական աշխարհի իրանական տարրի ակտիվացմանն ընդհանրապես[38]։

КУРДЫ И ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ СОБЫТИЯ В АТРПАТАКАНЕ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ X ВЕКА (ПО АРАБСКИМ ИСТОЧНИКАМ)

А. П. ПОЛАДЯН

Резюме

В X веке область Атрпатакан была одной из главных арен активной деятельности курдов. После арабских завоеваний миграции курдских племен в эту область были связаны с разными социально-экономическими и политическими причинами. Ослабление Аббасидского халифата и отсутствие сильной местной власти в первой половине X века привели к активизации здесь курдского элемента. В это время особенно отличался известный курдский военачальник Дайсам ибн Ибрахим ал-Курди, который овладел областью примерно в 934—938 гг. Его войско вначале состояло из курдов, в дальнейшем Дайсам стал привлекать к службе также дайламитов. Он был правителем Атрпатакана с перерывами до 953/4 г.

Кроме того, в указанный период курды в качестве наемной военной силы использовались и местными династиям—Саджидами и Саларидами.

---

35 Նույն տեղում։

36 К. Э. Босворт. Мусульманские династии. М., 1971, с. 127—129.

37 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս V. Minorsky. La domination des dailamites. Paris, 1932.

38 К. Э. Босворт. Нашествия варваров.—Мусульманский мир 950—1150. М., 1981, с. 27.